

ԾԱՌԵՐԸ (վիպակ)

Լա՛վը չես, խեղճ ես, լավը չես, գավա՛կս, որդիս, առաջնեկս, իմ հույսս, իմ թանկս, լա՛վը չես, մեջդ վրեժ չկա: Քո պապ ու իմ հեր Իշխանը արնագույն պուճուր մի ձի ուներ, էնքան պուճուր, որ բանակ չէին տարել ասում է, չարությունից պայթում էր՝ որ մի ձի իրենից առաջ էր ընկնում: Հնում էր, թոքերը շխկշխկում էին, քթերից կրակ էր թռչում - իր պուճուր տեղով տրաքում էր չարությունից: Քո պապի պահած շունն էլ պիտի էդպես լիներ, նրա գավակն էլ ու չափարի բանջարն էլ ու պատի օձն էլ պիտի էդպես լինեին: Դու լավը չես: Ինչ իմացողի հարցնում եմ՝ գովում ու ծիծաղում է - իբր թե լավն ես, խղճով ես, և էդ ծիծաղն իմ սրտին դանակ է դառնում, գավակս, գավակս: Իմ հեր ու քո պապ Իշխանը խելոք բաներ ոչ ասում էր, ոչ էլ մտածելու ժամանակ ուներ, նա գործի մարդ էր, գետինը նրա ոտի տակ վառվում էր... Բայց մի անգամ կիսաբերան ասել է ուսի վրայով իմ մերացվին հացի փող շարտելու պես, ու ես ասում եմ. մարդ չպիտի էնքան քաղցր լինի՝ որ կուլ տան, չպիտի էնքան դառը լինի՝ որ թքեն: Քեզ կուլ են տվել ու գովում են, գավակս, քեզ կուլ են տալիս: Ասում ես խիղճ, բայց խիղճը գիտե՞ս երբ է գեղեցիկ - երբ գազանի մեջ է: Քոնը խիղճ չի, խեղճություն է: Ամբողջ Վանքերը Իշխանից աստծու չափ շնորհակալ էր գիտե՞ս ինչի համար - բոլորին կարող էր վնաս տալ: Կարո՞ղ էր: Նրա վտանգը ծովիանի՛, ծովիանի նման խաղում ու ցուլում էր Վանքերից Բորչալու ու Բորչավլից Ղազախ բոլորի վրա և ամեն բուպեի կայծակ կդառնար ու կտրաքեր ուզած խեղճուկրակի գլխին: Բոլորի համար նրա լավությունն էն էր՝ որ չէր տրաքում, թե չէ ուրիշ լավություն ոչ ոքի համար նա չի արել: Լավություն բոլորին քո պապ ու իմ պատրոն Ավետիքն է արել: Ուրիշի համար՝ մեղու, պատվաստ, կացնի կոթ, ուրիշի համար՝ սել, ամուսնացած եղբոր փոխարեն՝ բանակ, եղբոր բանտարկված տղայի համար՝ կառավարչի մոտ կռո՞ի - նա աստծու լավությունն էր էս ամբողջ գյուղին, և գիտե՞ս ինչ էր ասել նրա Գիքոր փոքր ախպերը. «էդ ո՛նց է Սարգսի համար կռո՞ի գնաց, ինձ համար ձեռուտուն էդպես կապվել է՝ մի սել չի սարքում» (մի կաղնի կտրելու իրավունքի դիմաց անտառապահը Գիքորից մի եզանսել է ուզած եղել): Քո պապ ու իմ պատրոն Ավետիքի ճիշտ պատասխանը դա է, դու մի կարծիր, թե նրա վարքն ուրիշ պատասխան ունի: Ծնորհակալություն ո՞վ էր ասում նրա ձիուն - ոչ մեկը: Բեռն իջեցնում ու քամակին ձեռաց ճիպտում էին - բեռը՝ իրենց, քրտնահոտը՝ տիրոջը - գնա՛: Խիղճ, խղճի վրա խիղճ, խղճի վրա խիղճ, ներսից խիղճ, դրսից խիղճ - դա խի՞ղճ է թե փալասե տիկնիկ, գավակս, գավակս, իմ հոգսս, իմ տանջանքս, իմ անհանգստությունս, իմ տառապանքս, իմ բեռս: Աղջիկ եք տեսնում՝ կանգնում նայում եք ու աչքներդ լցվում է, տղա եք տեսնում՝ բերաններդ բա՛ց նայում եք, հիվանդ գառան համար լաց եք լինում, սիրուն հորթի համար լաց եք լինում - ձեր փորում տղամարդու սի՞րտ է թե սազը ձեռին աշուղ: Քո պապ Ավետիքի քնա՛ծ, դանդա՛ղ, բա՛րի, էն էլ ես ինչ իմանամ բարի՞ թե վախկոտ չեղած մի պուտ արյունը էդ ո՛նց կարողացավ կտրել մերանի պես քո մեջ Իշխանի տված էն կատաղի վարար արյունը, անդադար, խաբեբա, շողոմքոր, համարձակ, անքուն, վրիժառու, զնգուն-զվարթ-ավազակ առնաուտի արյունը քո մեջ էդ ո՛նց կտրվեց Ավետիքի քնած մի պուտ արյունից: Թե՞ եղբան դուրեկան է ծնկներն օջախին դեմ անել, ժպտալով ննջել ու հուսալ ու հավատալ, թե աշխարհը բարի է: Է՞ծը թուփ - գելը է՞ծ: Է՞ծն ես թե թուփը, գե՛լն ես թե է՞ծը , ո՞րն ես: Կա՛մ - կա՛մ: Չե՛ մի. դուք սպասեք ձեր դրախտին՝ որ վանքի գանգերն իրիկվա մեջ զրնգան, իրիկվա մեջ վանքի աղբյուրը երգի, հոգնած իրիկվա միջով ձեզ բարձած բերեն, վերցնեն ձեր բեռը քրիստոսի իրիկվա մեջ և ուռչի՛ շնորհակալությունը բկների մեջ, խեղդի - «շնորհակալ եմ, ձի, Բորչավլից, է՛, մի ձմեռվա հաց բերիր երեխեքիս համար, պարտական ենք, ձի»:

Մարդ ու անասուն իրարից ջոկվում են հիշողությամբ: Հիշողությունը դրած է անասունի և մարդու արանքում: Հիշողության մեջ ես՝ ուրեմն վառվում ես, մարդ ես, հաշիվներ ունես, անհանգիստ ես - հիշողության մեջ չես՝ հրե՛ն՝ բաց դաշտում կովն արածում է առանց հիշողությունների, իսկ հորթին երեկ են մորթել: Էն ծառը թե հիշողություն ունի՝ քոնոնք էլ ունեն: Քոնոնց կտրում են, մորթում են, գրկում են, ծաղրում են - քոնոնք իրենց հիշողությունից փախչում են, և նորից կգրկվեն ու նորից կգրկվեն ու նորի՛ց, ու նորից հիշողություն չեն ունենա, որովհետև վախենում են ծաղրին բռունցքով ու գրկվելուն կտրելով պատասխանել... Ասում եք սեր, ասում եք սիրում ենք: Սիրում եք, քանի որ կծելու, կտտրելու, գրկելու, ատելու տղամարդկություն չունեք - դուք վախենում եք ատելուց: Դուք ձեր սերը թաշկիհնակ եք անում, կապում աչքներիդ, որովհետև վախենում եք բաց աչքով նայել ու ատել - հանկարծ կտեսնեն, որ ատում եք ու կտան կսպանեն: Մի վախեցեք, մեռնելը դժվար է, ուզենաք էլ՝ չեք մեռնի, մի անգամ ձեր գլխի հետ թող իրենց բռունցքն էլ ցավի - տեսնեմ մյուս անգամ կխփե՞ն. տղամարդու պես մի անգամ կանգնեք՝ թող ձեզ գոռով ծալեն, դուք մի կտորվեք՝ ձեզ թող գոռով կտտրեն - մյուս անգամ տեսնեմ կկտտրե՞ն, կծալե՞ն, կմոտենա՞ն: Պե՞ծն աչքը կոխեիր՝ իմ հերը աչքը չէր ճպի: Իմ հերը կնայեր: Իմ հերը կնայեր, կտեսներ ու կպահեր աչքերի ետևում: Իմ հերը չէր մոռանում, իմ հերը մեծ պաշարի տեր էր: Ոսկու պես, ոսկու պես, իր պահած ոսկու պես մեկ աչքառ էր ելնում իմ հոր հիշողությունը, մեկ թաքցվում, բայց երբեք չէր կորչում, երբեք, մի բուռ մարմնի մի ծալքում պահված էր, տեղն եկավ՝ սրբած թրի նման դուրս էր քաշում իմ հերը իր հին հաշիվները: Ահա իմ հերը: Էն՝ քոնոնք, ահա իմ հերը - ո՞րն ես:

Իսկ որ մանր-անվնաս բաներ են պատմում իմ հոր գործերից, թե իբր... Էդ նրա մեծ վտանգից է, էդ՝ քորում են, էդ՝ շոյում են, որ իրենց քացի չտա: Էդ՝ գոհ են, որ իրենցը չի գողացել, իրենցին չի սպանել, իրենց չի շանթել: Թե իբր թոկ է կապել, կատուն շարտել գորգին, վերևի հարկից գորգն էղպես է գողացել: Իբր թե՝ «երեխեք, երեխեք, էդ հավը բռնեցեք, ձեռիցս փախավ», և ուրիշի հավն ուրիշի դռնից ուրիշի երեխեքով բռնել է տվել, բերել տուն: Կովն էստեղ կորցրել է, էստեղ կով է կորցրել - Բորչալու, Վրաստան, ցորնագողի բկից է բռնել, թե «էս է կովս գտա»: Դրանք եղել են: Քիրմանի էդ խալին ախպորս տանն է, իսկ կովը մեր դռնից կորավ, քո առջևից՝ որովհետև Ավետիքի տեսակն ես, Իշխանի տեսակը չես: Գիրք էին կարդում՝ կովը կորցրիր: «Նոր՝ ե՞րբ»: «Նոր»: «Նոր՝ առավո՞տը, ճաշի՞ն, երե՞կ» - որովհետև ժամանակը քեզ ու քո էստեղիներին համար գոյություն չունի, բացակա է: Ժամանակն իմ հեր Իշխանի համար էլ ստեղծված, ժամանակից նա էր փախչում՝ ոնց որ կատաղած շան առջևից փախչես, ժամանակը նրա էտևից չէր հասկանում: Ձեռաց-ձեռաց, ձեռաց-ձեռաց, ծիծեռնակը ոնց է բուն ծեփում, ձու դնում, ձագ հանում, քնում մի աչքով մի բուպե բնից կախված - ձեռաց-ձեռաց, ձեռաց-ձեռաց, հովը զով դարձավ՝ շարված է ձագերի հետ չուր: Անդրանիկի բանակում էր, Անդրանիկը գնաց, բանակը նրա էտևից՝ «Անդրանիկ, Անդրանիկ», իսկ քո պապն արդեն նախիր էր քաշում Քոշաքարա Թովուզ, Թովուզա Քոշաքար ոչխար էր քաշում: Այո, սրանց նախիրը գողանում ծախում էր նրանց վրա, նրանց ոչխարը գողանում ծախում էր սրանց վրա: Անդրանիկյանները դեռ «Անդրանիկ, ախ Անդրանիկ», անդրանիկյաններին սկսեցին հավաքել, դաշադությանն սկսեցին շարդել, բայց քո պապն արդեն կոռպերատիվ էր մտել, կոռպերատիվում եզների հետ քար էր քաշում- անդրանիկյան ու մանավանդ դաշադ ոչ եղել է, ոչ էլ լինելու է- կոռպերատիվական է, այտա: Մի եզը Քոշաքարա նախիրներից էր ետ գցել, մյուսը մեր հին եզն էր՝ ինձանից ու իմ ախպորից էլ առաջ, մեր Բեզլար պապի ժամանակվանից: Մի եզ էլ ինքն էր, եզների հետ հավասար քաշում էր կոռպերատիվի քարը սելով:

Իվան Արզումանովը ձեռը դրել էր նրա նիհար ուսին, պողովատե հայացքը դրել էր նրա շղային ճակատին ու՝ Իշխան, քեզ դեռ չե՞ն կախել: Իմ հոր ունքերը ճակատին խաղացել էին: Իմ հերը բարձր

չէր, կարճ էր, բայց նրա կարճությունն ո՞վ էր տեսնում: Իմ հերը ջիլ ու նիհար էր, բայց նրա փոքրությունն ո՞վ էր նկատում,- որտեղ լինում, որտեղ կանգնում էնտեղ իրենով լցնում էր իմ հերը: Կատաղած իմ հերն իրեն մի կերպ զսպում, իրեն տեղավորում է Արգումանովի ձեռի տակ, իսկ նա կախելու մասին է հարցնում: Իմ հերը թե՛ «ինչի, այտա, ես տանձի չի՞ր եմ»: Արգումանովը կարմրո՞ւմ, ուռչում է, «կախել, Իշխան, կախաղան հանել»: Զավակս, զավակս... քեզ և Անդրանիկի՛ համար կբռնեին, և կտային շո՛ւտ կտային Քոչաքար նախրի ու Թովուզ ոչխարի մեջ, և Իվան Արգումանովը քեզ կկախեր: Դու կխփեիր Արգումանովի ձեռքին, և Արգումանովը քեզ կկախեր: Ժողովուրդը ձենը կտրել, քարացել է: Քրտինքը պապիղ ճակատին դուրս է տվել: «Չէ, Վանյա, գործկոմն իմ մասին հատուկ որոշում է հանել»- ու պապո, - ձեռը ծոցագրպանն է տանում՝ իբր գործկոմն իրոք որոշում է հանել. բայց Վանյա Արգումանովը ուրիշ բան է ասում. «Էդ՝ նագան ես հանո՞ւմ թե որոշումն ես ցույց տալիս»: «Չէ, այտա, բա ես Մոսկվայի դեմ նագան հանող ե՞մ - որոշումը», ու պապո ծիծաղում է: «Գործկոմն ինձ պահելու հատուկ որոշում է հանել,- ծիծաղում է պապո,- որ դպրոցականներին ցույց տան, թե Իվան Արգումանովի հեղափոխությունից առաջ ինչ տեսակ մարդիկ են եղել» - ու պապո կախվում է Արգումանովի աչքերից, այսինքն թե՛ ինձանից ի՞նչ ես ուզում, թուրքը գալիս էր՝ անդրանիկյան էի, կոռպերատիվ է՝ արգումանովական եմ: Ով Արգումանովն էր նույն ուսը էր նույն ձեռքով թփթփացնում է ու որ փոշի է լինում՝ փոշու համար ծիծաղում է. «ոնց որ Թոզի բիձեն լինես» - ու ժողովուրդը ծիծաղում է, ու Թոզի բիձու Ասոն՝ խեղճ Ասքանազը ծիծաղում է: Սա էլ է ծիծաղում: Իմ հերը Թոզանց դռան աղբի չափ մենակ ոսկի ուներ հորած, բայց Թոզու Ասոն էլ է ծիծաղում, քանի որ Իշխանի դեմ միտք ունի, հիմա մտածում է, թե Իշխանին արդեն կռացրին, գլխին խփելու ժամանակն է: Պողպատը դժվար է կոտրվում, բայց կոտրվում է, իսկ պղինձը կարողանում է ծռել ինքն իրեն ու չջարդվել: Դու քո հպարտ ուսը կհանեիր Արգումանովի ձեռի տակից, և ջահել տարիների պողովատե Արգումանովը քեզ կկախեր: Իսկ իմ հեր ու քո պապ Իշխանը՝ ոչ - կոռպերատիվի իր թոզոտ ուսը դեմ է անում՝ որ թփթփացնի՝ որ փոշի լինի՝ որ փոշտա անցնի: Իվան Արգումանովը ծիծաղում է - և ժողովուրդն է ծիծաղում ու ասում «Իշխանն ազատվեց»: Իվանն էնպես՝ լիաբերան-լիաթոք չի ծիծաղում- էնպես՝ կիսատ՝ կեսբերան՝ հի-հի՝ որ էն է ծիծաղ է, ոչ էն է սպանելու նշան: Իրենց կաղնեգույն աչքերով նա հանգիստ նայում էր, բայց որ աչքդ աչքին էր առնում՝ մահն, ասում է, թիկունքիդ տալիս էր: Իսկ քո ջղային պապն իրեն պահում է նրա ձեռի տակ ու ասում՝ «չէ, ես գործկոմի հատուկ որոշում ունեմ»: Իրա հոր ու հորեղբոր հասակի մարդուն Վանյա Արգումանովն ասում էր մալադոյ չելավել՝ երիտասարդ: *Պալաժի նաստոլ տվոյ դակուսենտ ի ուխադի, մալադոյ չելավել:* Ո՞ւր գնա, ո՞նց գնա, ասում է գնա կախվելու, զավակս, զավակս: Իսկ քո պապը կանգնած է ուսը նրա ձեռի տակ, սառը քրտինքը ճակատին դուրս է տվել և ուզում է կատակով անցկացնի, «գործկոմը հատուկ որոշում», նա էլ թե՛ «նագա՞ն ես հանում»:

Իմ մերացուն ասում է հետո եկավ տուն, դուռը փակեց ու մորթած անասունի պես իրեն գետնով տվեց: Ես չեմ տեսել, ժողովուրդն էր չի տեսել, ժողովուրդը մենակ՝ «ես տանձի չիր ե՞մ, այտա» կամ «գործկոմը որոշել է ինձ էն եզան պես մի քիչ բանեցնի կոռպերատիվի համար, նոր մորթի» կամ գորգի կատուն կամ ուրիշի հավը, կովը, հազար ու մի բան, և դա եղել է, դրանք եղել են, բայց դե եսի՞մ եղել են թե չեն եղել... իսկ որ Վանքերի-Ակների-Չաղպատա ժողովրդի դեմ տվեց շուտ տվեց էն սարի նման մարդու՝ էն արդեն ոչ մեկը չի տեսել ու ոչ ոք չի լսել: Մենակ՝ ուրիշի հավը: Ամբողջ Մանացը հավաքված հրապարակ կապած է եղել, գիտե՛ք, ու իր գող կոնատակը պարապ՝ Իշխանն անցնելիս է եղել ժողովրդի հրապարակով, ու շատ տխուր է եղել իր պարապ կոնատակի համար, ու հավն էլ ժողովրդի էր հրապարակում է եղել, ու էր բերանբացների հրապարակում ասել է «երեխեք, երեխեք, հավը»: Իմ

մերացուն ասում է եկավ տուն ու իրեն գետնով տվեց մորթքած անասունի պես՝ որ չի բղավում, որովհետև կոկորդը կտրած ու խոչակը հանած է, բայց քացի-քացի է անում, քացի-քացի է անում՝ քանի որ վիզը կտրած չէ, քացի-քացի է անում, քացի-քացի է անում:

Վանյա Արզումանովն ինչու է եկել՝ էկել է դաշաղության գործով: Եկել գործը վերջացրել է, մի երկու օրով պտտվում է գյուղում-քաղաքում: Նայիր, մարդու սիրտ է պատռում աստծու կողմնապահ խտրականությունը - թե ինչն է մեկին օձի հանկարծական խելք տալիս, մյուսին ստեղծում էդպես ծառի պես անշնորհք-անշարժ: Միլլետին լուր է հասնում, թե թուրքի դաշաղը Քոշաքարա սարում է: Միլլետը միլիցիան զինավորում, գալիս իր խելքով լավ թվանք-բռնողներին էլ էս գյուղերից է հավաքում, գորք կապած դուրս են գալիս Քոշաքար: Թուրքի դաշաղը Քոշաքար է: Հեռադիտակով նայում է միլլետը՝ բաց լանջ է, դաշաղը ոչխարի մոտ ոչխարի մոտ չոբանի հետ հացի է: Բաց լանջ է-բաց լանջ է, միլիցիան բաց լանջին է- դաշաղը ոչխարի մոտ բաց լանջին է, հացի վրայից նայում է սրանց ու փախչելու տեղ չունի: Շո՛գ, ոչխարը կիտվել է, գենքը հանած դաշաղը հացի է: Միլլետը հեռադիտակն իջեցնում է, հրացանն ուսից հանում ու նշան դնում դանչաղի հացի մեջտեղը: Տղերքն ասում են մի կրակիր: Միլլետն ասում է էդ ինչն է չպիտի կրակեմ: Տղերքն ասում են չգիտենք, բայց մի կրակիր, վտանգավոր է: Միլլետն ասում է դե որ դուք չգիտեք, էս գիտեմ- էդ բաց լանջին էսքան հրացանի դիմաց մի երկու հոգին ո՞ւր է մտնելու: Տղերքն ասում են մի կրակիր: Միլլետն ասում է էդ ինչն է չպիտի կրակեմ: Տղերքն ասում են չգիտենք, բայց մի կրակիր, վտանգավոր է: Միլլետն ասում է դե որ դուք չգիտեք, էս գիտեմ - էդ բաց լանջին էսքան հրացանի դիմաց մի երկու հոգին ո՞ւր է մտնելու: Տղերքն ասում են մի կրակիր: Միլլետը՝ տրա՛ք, տրաքացնում ու գոռում է, թե հանձնվեք, էսքան հրացանի դիմաց ուր եք... իսկ դաշաղն արդեն իրեն տվել է ոչխարին: Թուրքն իրեն տվել է ոչխարին ու ոչխարի միջի՛ց, ոչխարի միջի՛ց... էդ բաց լանջին էդ ծանրակոշիկ, էդ դանդաղամիտ, էդ խելճ... Ասում էին դավաճանություն կա, հինգ տղեն անկարող է հիսուն մարդու... ու բողոք բողոքի ետևից, բողոք բողոքի ետևից Մոսկվա, Երևան, Թիֆլիս, Ռոստով՝ Արզումանովին, որովհետև, զավակս, զավակս, դու կասեիր գնդակը բա որ ոչխարի՛ն դիպչի ոչխարին մի վնաս տա, բա որ հորթի՛ն դիպչի ոտը ցավեցնի, բա որ չոբանի թիկունքը մտնեմ՝ գնդակը չոբանին դիպչի... Է՛, իսկ իմ հերը զարմանում էր թուրքի հանկարծական օձային էդ կտրուկ խելքի վրա:

Արզումանովը եկել պարզել է, և դավաճանություն չկա- կա բաց սար, ոչխարը թաքստոց չտեսնելու դանդալություն, ոչխարը թաքստոց անելու թուրքի կտրիչ խելք: Էդ՝ թուրքը: Հիմա՝ Արզումանովը: Թե էդ երբ է եկել, հագուստը փոխած երբ է գնացել ազատ թուրքերենը բերանում խառնվել դաշաղին՝ չգիտեն: Թե ինչքան է մնացել դաշաղի մեջ, թե միասին ինչեր են արել... բայց մի գիշեր դաշաղից ով ձեռը գենքին է գցել՝ կոտորել է, ով հանձնվել է՝ մաուզերի ռեխը տված բերել Մանացի բանտն է արել: Ու Մոսկվա գնալուց առաջ մի երկու օրով ման է գալիս հարազատ վայրերում: Ձենը թուլ, ցածր ձեն է, ասում են թոքախտից է, բայց թոքախտ չի, ուղղակի՝ ձենը չէր բարձրացնի: Ուրիշ մեկը լինե՛ր՝ կասեիր բան էս ասում բան ասա բան լսենք, բայց դա Արզումանովն է, լեզուն շարժում է, և քարանում են: Իմ հորը բան է ասում: Իմ հերը շատ լավ էլ լսում է, իմ հոր թիկունքը քրտնում է, բայց իմ հերը հարցնում է «ի՞նչ», և Արզումանովը նորից է ասում «կախել, Իշխան, կախադան հանել»:

-Դե բարձր ասա, տնաշեն, ժողովուրդը թող լսի ուրախանա:

Ասում ու ծիծաղում է, բայց սիրտը փորում տրաքել է: Իմ մերացուն ասում է քացի-քացի էր անում, քացի-քացի էր անում: Քո խորթ տատն ու իմ մերացուն խոսքի մեջ հիմար, բայց էապես շատ խելացի կին էր և մանավանդ՝ շատ խորամանկ: Ես որ իրեն չեմ սիրում՝ էդ չեմ սիրում, որովհետև ինձ զրկել է, - բայց կնոջը դրանով չպետք է չափես: Իմ մերացուն գնում փոխում է հրացանի տեղը. սյունի միջից

հանում ու դնում է ախոռի տակ: Իմ հերն, ասում է, տնից դուրս եկավ, նայեց, չտեսավ ու իջավ: Քայլն, ասում է, լուռ էր, կարծես լուսնալույսի միջով էր շարժվում: Տան ու գոմի արանքի բակում կանգնեց, նայեց, ասում է, չտեսավ, ու քաշում էր, ասում է, քաշում էր գոմի մութ բերանը իմ հորը: Ձին, ասում է, դողաց ու տապ արավ ինքը իր մեջ: Իմ մերացուն քարացել ու մտածում է՝ տեսնես խոտ լցրի՞ վրան, ծածկեցի՞, տեսնես խոտ լցրի՞ վրան: Գոմից դուրս է գալիս իմ հերը, կանգնում գոմի ու տան արանքի բակում ու նայում է, բայց չի տեսնում: Հրացանը չի գտել: Ու իմ մերացուն մահ է տեսնում ու իմ մերացվի ականջները դժժում ու ցավում են: Քաշում էր, ասում է, քաշում էր գոմի դուռը իմ հորը: Իմ մերացուն էնտեղ մատները բերանն է առել ու հանգել, ձին էնտեղ տապ է արել ինքը իր մեջ, իմ հերը տան ու գոմի արանքի բակում է, իսկ հրացանը սյան մեջ չի, ախոռի տակ է դրած ու քաշում է, քաշում է իմ հորը՝ որ բակի լուռության մեջ կանգնած է ու չի լսում ու չի տեսնում: Համազասպն իմ հորը երագում էսպես էր տեսել: Համազասպը եղբորը ուրիշ բան էր պատմել, բայց իմ հորը երագում հախպատեցին էդպես կանգնած էր տեսել: Իրենց մեռած հերը՝ ջաղացպանն իբր դուրս է գալիս լույս բացատ ծառի ստվերից ու իրեն քաշում դեպի ստվեր՝ թե արի հաց ուտենք, արի միասին ուտենք... ու ինքը գիտի, որ երագ է ու հերը մեռած է ու կախվում, քաշում է դեպի ստվեր, ու ինքը չի գնում, չի ուզում գնալ, նեղսրտում ու չի գնում, բայց ջաղացպանը քաշքշում է, ու մեր Իշխան հերը Համազին հրում է՝ թե գնա, հերդ է, կանչում է, գնա: Իր հերը կախվել, ծանր քաշում է ստվեր, իսկ մեր հերը բոթբոթում է՝ թե գնա, լուռ ֆսֆսում ու հրում է: Հաղպատեցին երագում իմ հորն ինչո՞ւ պիտի էդպես տեսներ: Իմ հերն ի՞նչ գործ ուներ ջաղացպանի հետ- ոչ մի, ջաղացպանին հո իմ հերը չէր սպանել՝ որ ջաղացպանի հետ քաշեր նրան ստվեր, թե արի, արի: Պարզվել էր, չէ՞, որ ջաղացպանին Բիցոնց տղերքն էին խեղդել, և ջաղացպանի Համազը Բիցոնց Արշակին էր սպանել տվել Քոի թուրքերում- պարզվել, վերջացել գնացել էր: Հիմա նորից իմ հերը: Իմ հոր ու Հաղպատի միջև, ճիշտ է, արյան մի տաս-տասնհինգ տարվա պատմություն կար, բայց դա մաքրված սրբված էր: Ոչ իմ հորաքույրն էր հիմա հիշում իր ամուսնուն, ոչ էլ իմ հերը՝ իր փեսային, չնայած ընկերներ էին եղել: Մեղքը լալով պարտքը տալով, բայց ամեն մեկն իր մեղքը լալով, ջաղացպան, մանավանդ որ դու անպարտ էիր և մեր փեսայի արյան պարտքը կառավարությունն ուրիշից էր առել, է՛, սիբիրներում, բայց դու քո անձնական գերեզմանից դուրս ես գալիս ու Համազասպիդ քաշում քո գերեզման և քեզ օգնական ես անում առնաուտ Իշխանին- լուռ ֆսֆսում ու լուռ քաշում են բացատի լույսից ջաղացպանի ստվերը: Սառը քրտինքի մեջ վեր է կենում Համազասպը ու եղբորը պատմում երագը էսպես, բայց պիտի որ իմ հորը նա տեսած լիներ տան ու գոմի արանքի մեր բակում- կարմիր ձիուկը մարել ու քրտնել է, չափարի մոտ կանգնած՝ իմ մերացուն ձեռները բերանն է առել, իսկ իմ հերը լուռ ուրուի պես կանգնած է բակում և պարզ տեսնում է ախոռի տակ թաքնված հրացանի տեսիլքը: Իմ հերն, ասում է, օրորվեց, և իմ մերացուն էդտեղ ծղրտում է: Ասում է, ինչպես լուսնահարն արթնանա՝ իմ հերն ուշքի եկավ: « Ի՞նչ է, ախչի,- ու կողքին կանգնած՝ իմ մերացվին նոր նկատեց: - Էս ձիուն ի՞նչ է եղել, էս ձին ինչո՞ւ է քրտնած»:

Ու էդտեղ խոսելով-ծիծաղելով, կատարները մի քիչ տաք՝ գալիս են Արգումանովները: Ոտից գլուխ բոլորը սև կաշվով կաշեվորված, խշխշում ու ճռճում են: Գալիս, անցնելիս կանգ են առնում մեր տան դեմ մեր բակի մոտ. Արգումանովը կանգ է առնում և Արգումանյանները նրա շուրջը կանգ են առնում, նրանց ետևից ու նրանցից քիչ հեռու՝ մեր ցեղի փեսան ու Արգումանովների ծաղրածուն, բոլորի ծաղրածուն... որտեղ միս են անում՝ շուրջը պտտվում են, որտեղ արաղ է շարժվում՝ էնտեղ կանգնած է, մոտիկ չէ, քիչ հեռու- մեր Վարդուհու մարդը՝ Ասքանազը՝ Ասոն: Վանյա Արգումանովը,- Հը, Իշխան,- ասում է,- ասում էս գործկոմը հատուկ որոշում է հանել, որ տանձի չիր չէ՞ս,- և Արգումանյանները էնպես՝ նրա պես՝ հի-հի՝ կիսաբերան ծիծաղում են, և մեր Վարդուհու Ասքանազը խեղճ-խեղճ ծիծաղում

է: Ձեռին հաց, ճիպոտը թևի տակ, հացը բկում, իմ հերն ասում է.- Կոռպերատիվի գործից եկել եմ, Վանյա, կոռպերատիվի գործին եմ գնում,- և Արզումանյանները ծիծաղում են, մեր Ասուն ծիծաղում է, ու իմ մերացուն աչքով-ունքով հասկացնում է Ասոյին, թե կտա կչորացնի, դո՞ւ ինչու ես ծիծաղում, տո ինձ դձ, և հասկացնում է իմ մերացուն Արզումանյանների շատից-քչից հասկացողին՝ Իվանին տանեն-գնան: Ո՛ւմ ես ասում: - Թե չէ կոռպերատիվն առանց քո քանդելու փուլ կգա,- ասում է Վանյա Արզումանովը, և Արզումանյանները ծիծաղում են: Հացը բկում՝ իմ հերն աչքերը շուռ է տալիս.- Հաց եմ ուտում Վանյա:

Ես դա չեմ տեսել: Ես քո Նանարի հասակին աղջիկ էի ու մի դեյրայի մեջ կանգնած էի եզների առջև: Իմ մերացուն է պատմել, և իմ մերացուն ասում էր, որ ինքն ափսոսացել է հրացանի տեղը փոխելու համար: Սև կաշվի մեջ ոտից գլուխ կաշեվորված՝ նրանք ճոճալով-խշխշալով-ծիծաղելով տարել են նրան ուղարկելու գնացքով իր Մոսկվա թե Ռաստով, և մզդակած բաճկոնի մեջ կուզ իմ հերը հաց ծամելով բակից դուրս է եկել, նրանց կաշվե թիկունքների ետևից թքե՛լ է հացը թե ճիպոտը թևի տակ ու գլուխը կախ իր քարին ու եզանն է եկել՝ ես ի՞նչ իմանամ, ինձ իմ մերացուն է պատմել, և իմ մերացուն հրացանը պահած լինելու համար շատ է ափսոսել:

Ճիպոտը ձեռիս՝ իմ հերն ինձ կանգնեցրել էր սելի դեմ, եզները խոտ էին ուտում, առաջները մի-մի բուռ խոտ էր գցած, ու սոգե՛ղ աշուն էր: Ես քո Նանարի չափ աղջիկ էի, ձորով սիրո՛ւն գնացք էր գնում, ես գիտեի, որ Վանյա Արզումանովը եկել է ու մտածում էի, որ Վանյա Արզումանովն ինձ երանի՛ տաներ հեռու Մասկվա, նրա կինն ինձ մի անգամ տեսել ու սիրել էր՝ « ինչ լավ երեխա է, Վանյա, որք է», ու նրա կինը չբեր էր, երեխա չէին ունենում: Իմ տատն իր շալը փաթաթել է գլխիս թևերիս տակով տարել ու մեջքիս վրա կապել է- ինձ էդ շալն է պահում: Միայն Իշխանն է կուրացել ու չի տեսնում, որ որք եմ, բոբիկ եմ, ծնկներս էդ սոգեղ աշնան մեջ բաց են: Բանում է, տեսնելու միջոց չունի: Ախպորս աշկերտության է տվել հյուսնին, ինձ դրել է սելի դեմ ու բանում է, բարձում է, քար է հանում, կրում է- եզները նութահատե՛լ սատկում են: Էդ հետո՝ բանտում տեսավ, որ բոբիկ եմ ու լաց եղավ. որ բանտ հաց էի տանում՝ բանտից տեսավ, որ ձյունների մեջ բոբիկ եմ ու լցվեց - այտա՛: Մինչև բանտ՝ մի երկու ոսկի ուներ, գոմից հանում ծառի տակ էր թաղում, այգուց հանում բուխարու ծակն էր կոխում:

Էդ ոսկին իրենը չի, չկա, Թովուզի ոչխարատիրոջն ու Քոշաքարա նախարատիրոջն է եղել ու է - իրենը մզդակած մի բաճկոն է երկու ձեռ ու մի հոտած բերան, - եկել ու հայհոյում է ո՛նց է հայհոյում, աշխատում է ո՛նց է աշխատում, հայհոյում է ո՛նց է... Նա գեներալ, նա Անդրանիկն է, ձիու վրա նա պիտի շրխկար Քոշաքարից Թովուզ ու Թովուզից Բորչալու - նրան խցկել են կոռպերատիվի բաճկոնի մեջ ու կոխել կոռպերատիվի քարի տակ, - բանում է ոնց է բանում, հայհոյում է ո՛նց է հայհոյում, ասում եմ հիմա կտրաքի: Նրա ազգուտակը, ողջուսատկածը խառնել է իրար ու հայհոյում ու բանում է: Քոնոնք՝ քո էստեղիները՝ քո հերը, քո պապը, քո հորեղբայրները չեն հայհոյում, բայց քոնոնք աշխարհից ինչ են հասկանում, որ ինչ հայհոյեն: Ծեծում ես, զրկում ես, մորթում ես՝ եզն անմոռնչ կանգնած է: Գոնե չարանան, գետնից գոնե մի քար զավթեն, գոնե հեռվից ուշունցի կապեն, - ո՛չ, - դե եթե ուզում ես մորթես՝ մորթիր, դե եթե ուզում ես կտրես՝ կտրիր - ես ծառ եմ: Քոնոնք ծառ են:

Ալան-թալանի էդ տարվա մեջ -, մերկ ցուրտ էր աշնան մեջ, երբ կարող ամեն մարդ, եթե մարդ է ու ծառ չի անասուն չի, պետք է կողոպտի ու ձմեռ մտնի ապահով, քո հորը տավարած են դրել տավարի մոտ, բայց ինքը տավարած չի, տասը-տասներկու տարեկան տղա չի - ծառ է: Ու ծառի պես էլ միայն նայում է - ոչ հարձակվե՛լ, ոչ լացել, ոչ գոնե փախչե՛լ ու ոչ էլ որևէ ծպտուն,- ծառի պես տնկվել ու նայում է, թե ոնց են քշում իրենց տավարն իր դեմից: Ով է քշում, գիտե՛ս, գլուխը բաշլուղով կապած իմ հերը: Ծառ, թուփ, քար, աստծու գերի: Իմ հերը տեսնում է որ թուփ չի ու մարդ է՝ քո հորն ասում է. « Մեծ տղա ես,

ինչ ես տնկվել, օգնիր, այտա... թուրքը գալիս է»- արար աշխարհի էսքան լեզվի ու էսքան բառի մեջ իմ հոր համար սո՛ւտ չկա,- բայց քո հերը կանգնած է ու նայում է: Մունջ է: Սա վա՛խ է թե խիղճ: Ոնց է վերջացել, գիտե՛ս - տավարի մեջ իմ հերը ճանաչել է իմ հորաքրոջ՝ իր Մանիշակ քրոջ գոմեշը: Ու կանգնել թքել է իմ հերը- մեծ է թե երեխա՝ մա՛րդ էլ էղբան խեղճ լինի, թո՛ւ - «ո՛ւմ մոզին ես, այտա»: Նրա՛ մոզին է, ով տասը տարվա բանակ է գնացել եղբոր փոխարեն, կառավարչի սելին կոռի է լծվել եղբորորդու փոխարեն, չգիտեմ ում սպանած որ թուրքի համար Հովհաննես Թումանյանից գրավ է դրվել Ղազախի թուրքերում և գրավատեղից դառնալիս է իմացել Իշխանի քրոջ ամուսին և իր եղբայր Ակոփի մահը, և որբերի ու որբնայրու հոգսը նրան կռացրել ու շալակին նստել է ու էլ չի իջնելու, քանի որ շատ հարմար է տեղավորվել... և՛ դեռ Օսեփ եղբոր որդիներին տնավորելու հոգսը և դեռ ինչեր՝ կպատահեն, և ինքն ուշ է ամուսնացել, որովհետև ինքն իր համար չէ, ուրիշների համար է, և անտեղի էլ ամուսնացել է, որովհետև նրանից ելածն ինչ էր լինելու՝ մատաղի գառ, հանդի ծառ, այգու խրտվիլակ - ծտերին թե վախեցրեց՝ վախեցրեց, թե չէ ուրիշ վախեցող չկա, երեխեքը գլխարկը թե տարան՝ տարան, թե չտարան՝ ուրեմն դեռ գլխին է: Իմ հորաքույրն, այո, ամուսնու կողմից դժբախտ կին էր. մեկին առնաուտ հախպատեցիք էին սպանել, մյուսն էստեղ կալ անելիս էր ձիու քացու տակ ընկել - բայց Իշխանն էնտեղից էր վառվում անբախտ քրոջ համար, Ավետիքն էստեղ էր քաշում որբնայրի ախպերակնոջ նրա խոտուփետի-կովուզումի հոգսը, Ավետիքի տղա քո հերն էլ կանգնած է կողոպուտի էղ տարվա մեջ տավարի մոտ ու նայում է, թե ոնց են քշում իրենց տավարը իր դեմից: «Ո՛ւմ մոզին ես, այտա... Լավ մոզի ես, իմ արևը, որ աղջիկ ունենայի՝ կտանի քեզ... թո՛ւ» - բայց ես կայի, քո Նանարի չափ էի, իմ տատը գլխիս շալ էր փաթաթել, թևերիս տակով բերել մեջքիս կապել էր - էղ տգեղ աշնան մեջ ինձ էղ շալն էր պահում: Հերս քար էր բարձում Խաչերի հին գերեզմանոցի տակ, ես կանգնած էի սելի դեմ, ձորով սիրուն գնացք էր գնում քաղաք Երևան, քաղաք Մոսկվա, քաղաք Թիֆլիս, իմ սիրասուն մայրն այդ նույն գերեզմանոցում էր, իմ անուշ մայրիկին ես երբեք չէի տեսել ու իմ լացը գալիս էր:

Իմ մերացուն բվեճ կին էր, գիշերաբուի պես որ վայում էր՝ մի տեղ մի արյուն էր պատահում: Այգու դռանը կանգնել էր, ասավ «հերդ ո՞ւր է»: Յուրտ էր, գիշերը սառույց էր կապում, իմ հերն ինձ ուղարկել էր տուն, ասել էր դու գնա, եզներն ինքը տարել էր ձորն անի՝ որ գիշերը տաք ձորում լինեն: Մերացուս ասավ «ձին խրտնեց»: Ձին հանկարծ այսահար էր եղել, բակից դուրս էր պրծել ու կորել խավարի մեջ: Մերացուս ասավ. «հորդ ինչո՞ւ մենակ թողիր, հորդ սպանելու են»: Արգումանենց տղերքը խմած եկան, ճամփի վրա դեմ ընկան մերացվիս, ճանաչեցին ու ծիծաղեցին. «մինչև Արգումանովի մյուս գալուստ, մարդիդ կյանքը քեզ պարզև, դարպասեցի, բանեցրու»: Իմ մերացուն մեր հանգով, մի տեսակ չհարցնելու պես հարցրեց, թե ուղարկեցի՞ս Վանյային: Նրանք խմած էին, գնացքի սպասելիս կայարանի բուֆետում էին խմել, ասացին. «ուղարկեցինք, գնաց մինչև մյուս գալուստ»: Իմ մերացուն ասավ. «խաբեցին, Վանյան մեջներն էր»: Իմ մերացուն ասավ. «Վանյան էստեղ է, գյուղում է Վանյան»: Իմ մերացուն ասավ. «հորդ սպանելու են, Վանյան գյուղում է»: Բայց իմ հերը եկա՛վ - մթան մեջ առանց ոտնաձայնի, մի հատիկ բկահագով՝ ըհը. ու մերացուս ինձ ջրի ուղարկեց: «Ձիու մասին հանկարծ բան չասես»: Ոնց բան չասես, դեռ այգում էի - «էս ձին ո՞ւր է, դարպասեցի»: «Քեզ ասում են ձին ո՞ւր է»: Երևի ասել էր ուրիշի է տվել, փոխ է տվել - «ստիդ հետ գլուխդ քարի ես տվել, ո՛ւմ ես փոխ տվել»: Մինչև ամանս կլցվեր - տղա-երեխեքը կիտվել էին, քչփչում էին, իրար ձեռից բան էին խլում, չէի հասկանում ինչ էին անում ու վախենում էի... ոտներս բաց որբ աղջիկ - վրայիս շորը տատի փաթաթած մի շալ է... ու մեկ էլ կատուն ֆոթաց ու փախավ՝ վառված: Վրան նավթ էին լցրել ու կրակ տվել: Իրենք վառեցին ու դեսուդեն փախան, ու էղ սատը մութ գյուղում ես եմ ու էղ կատուն է- էսկողմ է խփվում,

էնկողմ է կաշում, իրենից փախչում է, վանքի կողմ գնաց, գերեզմանոցի կողմ գնաց, գնաց կորավ ու մեկ էլ վառվելով, մարդու այլանդակ բղավոցով եկավ տվեց անցավ: Ո՞ւմ դեզի մեջ մտավ, ո՞ւր կորավ, ո՞ւր հանգավ: Խլացել եմ: Ասում եմ հանգած կլինի ու ոգու պես, ուրուի պես, չարքի պես կգա կքսվի:

Կանգնած տեղս կպել եմ ու մտել եմ իմ մեջ՝ մինչև որ մի լույս դուռ բացվեց, իմ տատի դուռը բացվեց ու դարպասեցու բերած իմ խորթ ախպերը դուրս եկավ: Ասացի լավ է, իրար հետ կգնանք տուն, բայց էդ երեխան աղբյուրին հասավ թե չէ՝ բղավեց ու գոռալով փախավ, չարքն ասես խփեց: Հատուկ որևէ բան չէր պատահել, ուղղակի վախտո երեխա էր, որ ուրիշ ձեն չլսի՝ տուն գոռալով էր վազել: Դեղին, աչքերը չռված, նիհար... Ասում եմ «էդ ինչից վախեցար, կատուն քսվեց ոտների՞դ» - շունչը կտրվում ու թախտի վրա ոտները տակն է քաշում: Իմ մերացուն ասում էր «հասկանում է՝ վախենում է», բայց նա առանց հասկանալու էր վախենում: Իմ մերացուն իր հետ բերածին ուրիշ ինչպե՞ս էր պաշտպանելու- «հասկանում է՝ վախենում է, դու ու քու ախպերը չէք հասկանում՝ չէք վախենում»: Ես ու իմ ախպերը, ո՛չ, վախենալու իրավունք չունենք - մենք որք ենք, մեր վախը պաշտպանողը, ճաքած մեր շրթունքին ջուր դեմ-անողը, որք մեր գլուխը մայրական փափլիկ իր թներին քնողը գերեզմանոցում է, մեզ թողել է սոված-ցուրտ էդ գիշերվա մեջ ու ինքը գնացել:

Իմ մերացուն պոմիդորով ձվածեղ արեց իր երեխայի համար, իսկ ես երեխա չէի՝ ինձ բարի լուր տվեց. «հերդ ձին գտնելու գնաց, հորդ սպանելու են»: «Ախպերդ շուտ գար՝ գնար հորդ գտնելու, հորդ սպանելու են Արզումանենք»: Ախպերս Մանաց է, հյուսնի աշկերտ է, նա ջարդված չի գա, նա գելի պես սոված չի գա, կատվի ուրուն չի փաթաթվի մթան մեջ նրա ոտքերին, նա անհասկացող է- «ուղարկեմ հորդ գտնելու»: Բայց վերև աստված կա, չէ - իր հասկացողը ճաշից զզվեց ու ետ տվեց: «Ճի՛ճու»:

Աստված նրա ձվածեղի մեջ որդ էր գցել, որովհետև տեսել էր, որ սոված մի որբ նայում է, թե ոնց է մերացուն ջոկողությունն դնում խորթի ու դեղնածի միջև: Ախպերս եկավ ու թաց կավի պես ծանր ր նստեց: Աչքերը փակվում են: «Ինչի՞ ես գոռում, ախչի»- իսկ ես լաց եմ լինում էդ սառը գետնին իմ բորիկ ոտների համար, դեղնած, վախլուկ, նիհար իմ ախպերացվի համար, էդ գիշերվա մեջ քարեքար ընկած իմ չար հոր, գերեզմանոցի իմ լույս մոր համար, և՛ որ իմ ախպերն էր նույն ձվածեղն ուտում է, իմ մերացուն նրա առաջ է դրել, իմ մերացուն նրա առաջ թույն է դրել, նա միամի՛տ ուտում է, իսկ խեղճ էն նիհարը աչքերը չռած նայում է ու նորից սրտամնա լինում, բայց թե փորում բան չկա, որ ետ տա, մի սրտիկն է մի վախլուկ աչքերը... հետո՛ որ ահի ցուրտ էդ գիշերվա մեջ հունցած կավի պես ծանր ր մի հաստատ ախպեր ունեմ - ինչի եմ գոռում: Դրսում մահվան դողն ինձ բռնել է, բայց մի ապավեն չեմ ունեցել՝ որ գոնե ծորտամ ու հիմա ախպերս մոտս է ու լաց եմ լինում - այ թե ինչում եմ լաց լինում:

Մեկ էլ՝ իմ մերացուն ծնկներին խփեց ու նվաղեց - «արյո՛ւն, արյո՛ւն, արյո՛ւն»: Ոչ, դարպասեցու իրենց լեզվով՝ «էրո՛ւն, էրո՛ւն, էրո՛ւն»: «Արյուն, արյուն, արյուն» ու հանգավ: Զարկված հավքի պես լուռ բերանը բացուխուփ է անում, բայց ես լսում եմ, որ ասում է Իշխանին սպանեցին, Իշխանին սպանեցին: Էդքան անսիրտ չեն լինի - իմ ախպերն իմ ախպերացվին վախեցրեց... թե էն խեղճին ինչո՛ւ եմ ախպերացու ասում: Իմ ախպերն իմ ախպորը վախեցրեց: Մի տարիքի էին, բայց նա կծկված մի բուռ հոգի էր, նա՛ թրջած կավ, ասաց «դևը մտավ մորդ փորը», բայց նա գիշերային էր տան մեջ հենց էդպես էլ տեսնում էր, չէ՛ - որ դևը օրորեց ճրագի լեզուն... սահեց լոբեց սենյակի անկյունում... մտավ դարպասեցու մեջ: Էդ բոպեին «բախկ» անեին՝ կշորանար խեղճ երեխան, դրա համար էլ աստված կա, ու նա մայր ուներ գլխի վերև, նրա մայրն ինձ համար էր մերացու, նրա համար մայր էր, նրան պիտի պահեր, նրա վախը պիտի թաքցներ, նրա համար դեռ պիտի աղջիկ չհավաներ աղջիկ ջոկեր, նրա մազը փետելով ու գովելով պիտի հնազանդ պահեր նրան... - ինձ տատի փաթաթած մի շալն էլ բավական էր ու շատ էր, որովհետև որբի կաշին հաստ է լինում: Էդ շալով՝ կանգնած եմ:



Մին էլ Իշխանը.

-Տուր-տուր-տո՛ւր, Աստ, տո՛ւր, ես քու ծնողը, տո՛ւր:

Այո, մյուս օրն է: Մյուս օրն է կամ էդ օրերից մեկն է: Ձին գտել էր, բերել էր, կապել էր, ախպերս էլի իր աշկերտությանն էր գնացել, ախպերացուս այգում էլի վախենում է, բայց Իշխանից վախենում է գալ մոր փոշը բռնել, մերացուս էլի այգում դռանը՝ «Իշխանին սպանելու են - Իշխանին պանիլ դեն», սելի դեն եզների առաջ ես կանգնած դողացնում եմ, իմ ազրայիլ հերը քար է բարձում: Բարձում է՞: Վառվո՛ւմ է, վառվում - Արգումանովը նրան վառել ու թողել է - ո՞ւմ տունն է կրակ գցելու, ո՞ր խեղճի գլխին է տրաքելու, ո՞ր հպարտին է լիզեցնելու գետինը: Մին էլ ձեռի քարը թողեց ու դեռ կոռացած՝

-Տուր-տուր-տուր-տուր, տո՛ւր, Աստ, ես քու ծնողը, տո՛ւր:

Երկու խաչքարի արանքով, տեսնեմ, մի թվանք է դողում - չի դողում, տմբտմբում է: Արծիվը ճյուղից որ թռչի՝ ճյուղը ո՞նց կշարժվի - երկու խաչքարի արանքով հրացանն էդպես է շարժվում: Ով որ է՝ սիրտը միջից թռել է ու հրացանը ձեռից ընկնում է: Թոզի բիձու Ասքանագն է՝ մեր Վարդուհու մարդը:

-Տուր-տուր-տուր, տո՛ւր... - ու էդպես կոռացած էլ գնաց իմ հերը:

-Լավ տեղ ես բռնեցրել, խփիր, Աստ, խփի՛ր, ես քու ծնողը, խփիր:

Ասոն կանգնել է, ու հրացանը տմբտմբում է:

-Տուր, Աստ, տուր, վախիլ մի՛, տո՛ւր:

-Ես քո դրկողի ծնողը՝ որ քեզ վրա հույս է դրել, տուր, Աստ՛...

Թվանքի ծերից բռնեց, խաչերի արանքից քաշեց հանեց էդ խեղճին ու թվանքի կոթով, մահակի պես, տվեց վեր բերեց էդ երկու իր հասակի մարդուն ու՝ հրացանով-նոտով, հրացանով-նոտով, հրացանով-նոտով, հետն էլ՝ ուշունցով, ուշունցով... Էլ Իշխան չկա՞, Իշխանը էդքան պրծել է՞... - և ուշունցի կապած՝ դեպի գյուղ: Դարպասեցուն ասել էր.- Գնա դրկի՛ իրենց սատկածին գնան տեր լինեն, կսատկի, այտա, մեղք են, Վանքերն անձադրածու կմնա:

Ես չեմ տեսել: Ես կանգնած եմ եզների առջև սայլի դեմ, էն խեղճն էնտեղ տնքում է՝ ոնց որ հիվանդ անասուն տնքա, ակների տակ Իշխանը քար դրած է եղել, եզները շուռումուռ են արել՝ քար չկա ակների տակ, սելը հիմա կփախչի, տակով կանի եզներին էլ, ինձ էլ իմ սև բախտի հետ, ու ես քարացել եմ եզների առջև: Եկել քաղաքը անցել էր, ձորով, է՛, ազատ ծղրտալով գնացք էր գնում քաղաք Մոսկվա, ու իմ սիրտն ասում էր, որ Արգումանովը գործ չունի Իշխանի ու էդ խեղճ Ասոյի հետ, ու իմ սիրտն ասում էր՝ երանի՛ տարած լինեք Արգումանովն ինձ իր բարի կնոջ մոտ քաղաք Մոսկվա, չլինեի՛, չլինեի էսպես տնկված սելի դեմ: Հետո, երբ ունեի իմ տունուտեղը և իմ մերացուն տեսնում էր, որ հույս ու աչք չունեմ իրենց գյոռած ոսկու վրա, իմ մերացուն ինձ ասավ: Իմ հերը դեսուդեն է խփվել, դեսուդեն է խփվել ու քնել է: Իմ մերացուն ասում է.

-Աչքը մի բոպե վայ թե կացրեց:

Ասում է.

-Ասավ «թվանք բռնող են գտել - մի ձեռով շավարն է բռնում, մի ձեռով...» ու մի բոպե հանգավ:

Ո՛չ, էդ անցնելիս Ասքանագի Ոսկի մորն էր ասել, մի բարի, մի խեղճ կնիկ էր, մեկ էլ նա էր տեսնում ուռած ոտներով իմ որբությունը, բայց նրա ձեռին ի՞նչ կար, աստծու օրը սրանից-նրանից հաց էր փոխ առնում, մեկ-մեկ տալիս էին, շատ ժամանակ էլ չէին տալիս, որովհետև փոխ էր ուզում, բայց դա մուրացկանություն էր կամ ո՞վ կուտեր նրանց թխած հացը,- անցնելիս իմ հերն ասել էր դեպի Թոզի բիձու գոմ. «Խաչերի գերեզմանոցում է, գնացեք ձեր թվանք-բռնողին բերեք, այտա, մի ձեռով թվանք է բռնում, մի ձեռով շավար»: Իմ մերացուն ասում է գլուխը մի բոպե մութաքային դրեց, մի բոպե հանգավ-չհանգավ ու վեր թռավ օձի կծածի պես.

-Պահ, ճգնավորի էրը:

Իմ մերացուն դուրս է թռչում իմ տատի մոտ.

-Նանի ջան, ասավ, ճգնավորի էրը, վայ նանի ջան, ճգնավորի էրը:

Ճգնավորի էրում ինձնից ու իմ ախպորից շատ առաջ կոտորած է եղել ու ժողովուրդը վախենում է եղ մասին խոսի, ով եղ մասին խոսել է՝ սպանել են, ով խոսում է՝ մի դժբախտությունից, մի պատահարից, մի վատ բանից լինում է նրան: Իմ տատն իմ մերացվին ասում է.

-Հրացանը չպահես, թշնամուս գտել է, չմոլորեցնե՛ս Իշխանիս:

Ոնց որ. պատկերը տեսնես՝ իմ հերն աչքը մի բոպե կպցրել ու պատկերի պես տեսել է - քարի գլխին նստած հախպատեցին ականջ է դնում թե տրա՛ք, երբ է տրաքելու Իշխանի կյանքը Հաղպատից Ակների վրայով, Վանքեր ու Մանաց-ձոր լռության մեջ: Թոզու Ասքանազի ձեռը թվանք է դրել, դրկել, ինքը Հաղպատից իջել է ճգնավորի էրի մոտ քարի գլուխ, նստած՝ կարկոցի է սպասում: Տգե՛ղ աշուն է: Ծառերը մերկ են, սև ագռավ է թռչում, սարերը ձնել են, ձորերը լուռ են - Վանքեր ընկույզ կոտրես ատամով՝ Հաղպատ կլսվի:

Իմ տատն ինձ պատմեց: Ե՛րբ եղ բոլորն անցել էին ու որբի իմ գլխին եղ բոլորի տեղակությունից նոր փորձանք չէր գա, իմ մազը սանրելով ու հյուսելով ու լացելով իմ տատն ինձ պատմեց: Իմ պապը տիրացու էր եղել, իմ տատը տիրացվի կին էր, տանը սուրբ գիրք ուներ: Աղջկա՝ իմ հորաքույր Մանիշակի Հաղպատ որբերիանալուց ու տիրացվի մահից հետո իմ տատը սևավորվել ու մտել էր տուն, լուռ լսում էր թե իր մահը երբ է գալու, բայց երկար ապրեց, ու էս լույս աշխարհքի ամբողջ անցուդարձը նա գիտեր - ով է ում գրկում, ով ում կնոջը հափշտակեց, ով որտեղ է դարան կացել, ում ապրանքն է մորթվելու, եղ ինչ անհայտությունից ում վրա է գնդակ թռչելու: Հաղպատի մեր փեսան՝ իմ հորաքույր Մանիշակի ամուսինը... անունը, պատմել են, չեմ հիշում, էս՝ իմ ախպորից ու ինձնից ու մերացու ունենալուց առաջ է եղել, իմ լույս մոր գալուց էլ առաջ... Համազասպի անունը ճիշտ եմ հիշում, ամբողջ Վանքերը, հետո՝ Ակները Մեծ քարի գլխին սև ցելերով վազում ու գոռում էր դեպի Հաղպատ.

-Համազա՛սպ... Համազա՛սպ... Համազո՛... Համազասապ՝... Համա՛զ...

Ես կանգնած էի սելի դեմ եզների առջև: Ձեռիս երեխայի մի ճիպոտ էր: Անիվների տակ քար չկար դրած, Իշխանի բարձած սելը հուպ էր տալիս եզների գլուխը դեպի ձորը, եզները չոպել ու մնացել էին: Ասում էի Իշխանն ինձ կսպանի: Ասում էի իջնեմ քաղաք, գնամ հարցնելով-հարցնելով գտնեմ ախպորս աշկերտության տեղը, իրար ձեռից բռնենք ու գնանք կորչենք էս Իշխանից, էս Վանքերից, էս մերացվից: Էն խեղճն էնտեղ տնքում էր, մեկ էլ տեսնեմ ուզում է վեր կենալ - գարնան նիհար անասունի պես քամակը բարձրացնում է, բայց չի կանգնում, նորից ընկնում է: Վերջը՝ նստեց: Նստեց ու նայում է: Նայում է, նայում է... ու չի տեսնում, ասում է «բա՛», ինքը իրեն ասում է «բա՛»: Հետո ինձ տեսավ.

-Աղջիկ ջա՞ն...

Հետո լաց եղավ - երեխայի պես հեկեկաց:

-Տեսա՞ր ինչ արավ ինձ քու հերը:

Ի՞նչ արավ, ուրիշ ի՞նչ պիտի աներ:

-Ոչ ամոթ ունի, ոչ վախ...- ու լաց է լինում և ուզում է շարժվի, բայց ցավում է, ու լաց է լինում:

Ասավ ակների տակ քար դիր, դրեցի, բայց ինչ էր լինելու քո Նանարի դրած քարը: Նստած՝ երեխայի պես սողալով-սողալով՝ նստասոթ-նստասոթ ինքն եկավ քար դնելու ակների տակ: Ու տգե՛ղ լաց է լինում, երեխայի պես լաց է լինում: Ու դեռ պիտի եզներն արձակի՛, եզների դնչի տակ նստած դեռ պիտի կապերը քանդելու վրա չարչարվի ու չկարողանա թուլացնել Իշխանի ձգտած կապերը ու լաց

լինի, եզր դեռ պիտի նրա ոտը տրորի, ու նա պիտի տնքա ու կլանչի,- դրա համար էլ ասում եմ, որ խիղճը գազանի մեջ է գեղեցիկ, և փալաս մարդու խիղճը փալքոտ է:

Տրաքոցի պես ամբողջ Վանքերը դուրս թափվեց ու եկավ - սև ցեղերից ինչպես միանգամից ագռավի երամ բարձրանա: «Համազա՛ սպ, Համազա՛ սպ, Համազա՛ սպ»: Ձիու ականջը մտած՝ Իշխանը եկավ կտրեց անցավ, նայեց չտեսավ ու անցավ ձիուն ծեծելով-ծեծելով: Մահը կույր է լինում, տեսնում է միայն իր կնքածին - կույր քարի պես գլորվում է, սրա գլխով թռչում ու նրան է խփում: Իշխանը միայն ճգնավորի էրն էր տեսնում, էրի մոտ քարի գլխին՝ Համազին:

-Համազա՛ սպ... Համազա՛ սպ... Համազոյին ասեք փախչի՛... Համա՛զ...

Խրտնած նախրի պես ժողովուրդն էր ցեղերով վազում է: Ժողովուրդը հոգնել է գողությունից, դավաճանությունից, կոտորածից - «Համազա՛ սպ»: Համազասպն էլ է հոգնել, ուզում է Իշխանի հաշիվը փակի ու սուսուփուս ապրի: Ակներից սրանց ձենն առել, ձեն են տալիս դեպի Հաղպատ.

-Համազոյին ասեք փախչի՛... Համազա՛ սպ, Համազա՛ սպ...

Ես էլ եմ ուզում գնամ, կանչեմ, վազեմ... Թե ճգնավորի էրում ինձ ի՛նչ են տալու, իմ որբիս ի՛նչ է հասնելու ճգնավորի էրում... Բայց էդ խեղճն էնտեղ չարչարվում ու լաց է լինում, եզների դնչի տակ դողում ու լաց է լինում... Իսկ Իշխանը նրան չտեսավ էլ, նայեց, չտեսավ, կտրեց գնաց: Ժողովուրդը՝ նրա ետևից: «Համազասպին ասեք... Համազասպի՛ն...»: Համազին ասված է: Նրան և իր հե՛րն է ասել երագում, և դրանից էլ շատ առաջ ինքն է իրեն ասել, որ Իշխանը մի օր գալու է: Նրանք երկուսն էլ երկաթգծի շինարարությունում աշխատել էին, հետո, միասին էին եղել թուրքի ճակատում, հետո, Քոշաքար էին միասին եղել... ու էդքան ժամանակ իրարու ականջ էին դրել: Իմ հերը հասկացել էր նրան - նա էլ իմ հորն էր ճանաչել: Ակներից դենն ու Հաղպատից դեսը բլուրների ժողովուրդը կանգ է առնում՝ ոնց որ ջրի բերանը կտրես - ճգնավորի մոտ քարի քլխից Համազասպը տալիս սպանում է ձին իմ հոր տակ ու թվանքը պահած գոռում է. «Իշխան, չեմ իննայելու, մոտ չգաս»: Իմ հերն, ասում է, լուռ քարի պես ձորն ընկավ ու ինչպես երագախառն լսես մահվան ու գիշերաբուի թրթփոցը՝ տվեց ճգնավորի գլխին դուրս եկավ: Համազասպն, ասում է, բառաչեց ու փախավ լանջնիվեր-լանջնիվեր ընկնելով-ելնելով:

Համազասպն իրեն տալիս է դեպի Հաղպատ: Վանքի դուռը տերտերը ներսից փակում է: Վանքի դռան գլխին իմ հոր գնդակի տեղը կա: Տերտերը ներսից ասում է. «Հովհաննես Թումանյանը քեզ Դսեղ թե փրկեց՝ փրկեց»: Իմ հերը շուռ է գալիս ու մի գնդակ էլ դեպի ջաղացպանենց տուն է բաց թողնում - Համազի ախպերը տապ է անում, բայց ախպերը անպարտ էր, որովհետև ընտանիքի ամբողջ խառնակչությունը աստված էթե տալիս է եղբայրներից մեկին՝ մյուսին անարատ գառ է թողնում: Էս բաներն իմ տատը լավ գիտեր. տիրացուի կին էր եղել, տանը սուրբ գիրք ուներ: Իմ տատն իմ մերացվին ասել էր. «Ճգնավորի էրը - Իշխանս թշնամուս գտել է, չմոլորեցնե՛ս որդուս»:

Իմ հորաքույր Մանիշակը Հաղպատ հարս է եղել, առաջնեկը կողքին քնած տասնվեց-տասնյոթ տարեկան աղջիկ-հարս է եղել: Անունը չիղջեցի - միտքը միամիտ, ոտը թեթև, օձիքը բաց՝ առավոտի հետ ամուսինն իջել է ջաղացաձորի լանջերը ընկույզ թափ-տալու: Վանքերն ու Հաղպատը կակալ են ասում, առավոտի հետ իջել է կակալ թափ-տալու, իսկ հարսը հետո է գալու երեխան գրկին. երեխան խաղալու է հավաքած կակալի մեջ, իրենք հավաքելու են: Հարսը գա ինչ տեսնի - ծառի տակ արնաթաթախ մեռած: Ամուսնու կողմից դժբախտ կին էր իմ հորաքույր Մանիշակը, էստեղի ամուսնուն էլ՝ քո պապի Ակոփ ախպորը ձին էր սպանել էն հի՛ն ուրախության մեջ սեպտեմբեր ամսի գրնգան կալում: Ամբողջ աշխարհն ուրախություն - մերը սևուսուզ է:

Ինչ է եղել: Բարձրացել է ծառին, ծառի վրա է, հիմա շղահարելու է, չոր կակալը գետնին շխշխկալու է: Չորում նախշուն, խշշան աշուն է: Ինքն, ասում է, մազը թեթև, կապուտաչյա տղա էր, բերանի խոսքը՝ կատակ, ու վախուկ: Խոսքուծիծաղոտ բոլորը վախուկ են, վախենում են լուրջ կամ տխուր կամ ծանր երևալուց, վախենում են դուր չգան ու կատակում են: Ծառը շղահարելու է, մեկ էլ ինչ տեսնի - կազակները դեմի լանջին քարից քար, թփից թուփ ճգնավորի էրը կալմեջ են առնում: Չորի ճամփին ջաղացի մոտ ֆուրգոն կա՝ կողքին սվին բռնած ռուս կազակ, քարայրից ներքև կաճանին կանգնած են ջաղացպանն ու իր տղա Համազասպը, իսկ կազակների բանակը թփից թուփ, քարից քար ամբողջ լանջով մեկ շրջապատում է ճգնավորի էրը: Ե՛, էնտեղ հին գրքեր գտան, էնտեղ ինչեր էին եղել ու ինչեր եղան: Կազակն իրա Ռուսաստան նստած ի՞նչ գիտի ճգնավորի էրն ինչ է - ջաղացպանն ու Համազասպը բերել տեղը ցույց են տվել, իրենք մի կողմ են կացել ու կաճանից նայում են, թե կազակը ոնց է կոտորելու կարմիր տղերքին: Տղերքը կրակում են թե չեն կրակում, բայց օֆիցերն իր ահից ռուսը է ներս գցում: Գուցե իր ահից, գուցե չարությունից՝ որպեսզի հանկարծ գերի չվերցնի, ռուսը է ներս գցում: Մի հատ էլ է գցում: Մի քիչ սպասում՝ մի հատ էլ է գցում: Հետո ներս են մտնում, մութ գտնում ու մոմի լույսով՝ ով տնքում է, ով տապ է արել, ռուսի գազից ով խեղդվել է, ով արյուն է տալիս՝ բոլորին կոտորում են: Հետո կարգադրում է, ու զինվորները քարշ են տալիս նրանց ֆուրգոն, տանում գնում: Տարան-գնացին, ու հիմա լուռ ձորն է, կարծես երագում եղած լինի: Ջաղացպանն ու Համազասպը շուռ գան ինչ տեսնեն - ծառի վրա մեր շեկլոն ահից չորացել նայում է: Գալիս խաբում իջեցնում են ծառից, հետն ինչ են խոսում ինչ չեն խոսում ու քարով գլխին տալիս են: Վերջացավ: Էդ նախշուն ջաղացաձորն է ու ընկուզենու տակ արնաթաթախ մեռած ամուսինը:

«Էդ ո՞վ ես, ախչի, ծառից էդ ո՞վ՝ ընկել» - ձորից, ջաղացի դռնից Համազասպն է հարցնում, իբր ինքը չգիտի ում է սպանել և ով է պապանձվելու երեխան գրկին: «Էս տղեն թե էս ծառին է բարձրացել՝ թափ-տված կակա՞լն ուր է, թե էս ծառին չի բարձրացել՝ ինչո՞ւ է սրա տակ ընկած» - էս՝ Իշխանն է հարցնում իրեն: Ինքը իրեն հարցնում ու նայում է ձորի ջաղացին, ճգնավորին, ձորի ճանապարհին՝ ուր կանգնած է եղել կազակների ֆուրգոնը:

Իմ տատն իմ մերացվիին ասել էր.

-Ոչ մի Արգունմանով, ոչ մի Աստ - Համազասպը հասկացել է, որ ջաղացպանին Իշխանն է սպանել, գնա թվանքը հանիր:

-Բա որ Բիցոնց Արշակին Համազասպը թուրքերում սպանել տվեց... բա Բիցոնց Արշա՞կը չէր ջաղացպանին սպանել,- էս՝ իմ մերացուն էր մոլորվել:

-Էդ՝ իսի՛, ջաղացպանն ու իր Համազասպը Բիցոնց ո՞ւմ էին սպանել, որ Բիցոնք ջաղացպան սպանեին: Իշխա՞նը: Նրանք Իշխանին - Իշխանը նրանց:

Մի բեռ հացի, թե՞ տակի ձիու, թե՞ որ հայի կոտորածի տարի էր՝ Բիցոնց Արշակին Բորչավի թուրքերն են սպանել, Համազասպն անմասն է Արշակի սպանությանը, Իշխանին մոլորեցնելու համար է Համազասպն իրեն մեջ-խառնում: Մոլորվող գտիր, հաղպատեցի՛, մարդի ոչխար կա, բայց մարդդ ջոկիր:

Իմ հերն էդ Հաղպատ առնառուտ գյուղում շուռ է գալիս ու մի հատ՝ ջաղացպանի տան վրա - Համազի ախպերը մտնում է թախտի տակ: Վախլո՞ւկ, փուխլո՞ր, ճագարի սրտի նման սիրտը գցում է... Իշխանից էլ է վախենում, ախպորից էլ է վախենում... թախտի տակից դուրս չի գալիս... ասում են, համոզում են, քաշում են՝ չորացել է, դուրս չի գալիս, վախենում է հանեն սպանեն: Իմ տատը նրա բարակ սրտի համար էլ ջոկ էր լաց լինում: Իմ տատը իմ մազը հյուսում ու երգում ու լաց էր լինում էն խեղճ տղայի համար՝ որ մեռնելու արժանի ոչինչ չէր արել, նրա մեղքը մենակ էն էր եղել, որ պատահամբ ծառի վրա

էր եղել ու ծառի վրայից տեսել էր, թե ինչ արարքի տակ մտան ջաղացպանն ու իր Համգոն... և՛ որ էն մշեցի, էն թիֆլիսեցի, էն դարաբաղցի ու ամբողջ հայաստանցի էն տեղերքն անտեր թափած էին եղել միլիցատան առջև ու վրաները լացող չէին ունեցել ու թաղող չէին ունեցել, էդ պապանձված ժողովրդի մեջ անտեր թափված էին եղել - նրանց վրա հիմա իմ տատն էր երգով լաց լինում... և՛ որ էն խեղճ Համագը բողկ էր՝ կերել էր ու հիմա ետ էր տալիս, Իշխանի առջև փախած՝ թոքերը ետ էր տալիս, ետ էր տալիս, ու Չաթին-դադ քարոտ սարում նրա համար մի քար չկար՝ որ ետնն անցներ, ու գետինը չէր պատռվում առնում նրան իր մեջ - աչքերը պինդ փակեր, ականջները փակեր՝ չլսեր Իշխանի թրթփոցը... և՛ որ Իշխանի ձին երեք օր ու գիշեր արյուն էր սվել, տնքացել ու ձկնաբեր չախկալների ու կատունների մեջ, ու Իշխանի վախից ակներեցիք չէին սպանել-ազատել ձիուն ծանր հոգեվարքից... և՛ որ Համագի մերը վիզը թեքած իմ հոր առաջն էր գնացել՝ «Իշխան ջան, էս երեք օրը Համագը քոնն էր, հիմա երեխիս չէ՞ս տալիս վրան լաց լինեմ, երեխաս բա հիմա՞ էլ չի իմը», ու մոր պես ծառս էլ եղել իմ հոր երեսն ի վեր - արնախո՛ւմ... և՛ որ Համագի վերջին թառանչն էն էր եղել, թե «օ՛Ֆ, այ տղա, երկիրը թեթևացավ»... և՛ որ մեր եզները գերեզմանոցի մոտ լծվելու էին սպասել մի օր, երկու օր, երեք օր, հետո Քոշաքարա բերած մեր եզը մեր հին եզանը համոզել էր, թե սրանց հետ գործ չունես, արի քեզ տանեմ մի լավ տեղ, և քաշել, տարել և սարերով ու ձորերով գնացել էին նրա ազատ Քոշաքար - ասում է, տաք ձորում նստել էին, խաղաղ որոճում էին, ասում է, որ տեսավ՝ գլուխը թեքեց ու հանգիստ նայեց: Էս բոլորի վրա ու իմ որբ գլխի վրա իմ տատը լաց էր լինում ու երգով պատմում: Եվ ինչպես սուրբ գրքից կարդաս՝ «որդիս թշնամուս գտել է, չմոլորեցնե՛ս որդուս»:

Վանքի պատին իմ հոր գնդակը մեխվելու հետ տերտերը ներսից ասում է. «Հովհաննես Թումանյանը քեզ թե փրկեց՝ փրկեց»: Տո էս քո սև գլուխը թաղեմ, խի՞՞ - Հովհաննես Թումանյանը էնտեղ բուսած մշտական ծա՞ռ է, խաչքա՞ր է, որ ձեր պարապ սրտով մեկ մատնություն ու շնություն ու դավաճանություն անեք ու թվանքն աչքներիս կալնի թե չէ՞՝ փախչեք մտեք ետևը: Հովհաննես Թումանյանը վա՞նք է: Հովհաննես Թումանյանը բանաստեղծ է, ինքն ու Իշխանը նույն Չոբանենց թոռներն են, Չոբանենք Իշխանի ու Հովհաննեսի պապոնք են, Չոբանենց տղերքը Իշխանի քեռիները-քեռու տղաներն են, Հովհաննես Թումանյանը իր հայոց բարձր հասակով կանգնելու է Իշխանի ճամփին - «լա՛վ, Իշխան, ինչ եղել է՝ եղել է»: Ձեր վատերի ցավից Հովհաննես Թումանյանը կույ է եկել, մի բուռ կաշիռուսկոր դարձած ռուսաստաններում հոգին տալիս է նրանց բարակ աղյալի տակ, ռուսներն, ասում է, վերմակ չունեն, նրանց վերմակն, ասում է, աղյալն ու բանակային շինելն է:

Չարուբարու ցավերից Թումանյանը ռուսաստաններում մեռնում է, բայց քոնոնք էստեղ կան, քոնոնք՝ քո պապ ու իմ պատրոն Ավետիքը, նրա ախպեր Եսային, ախպեր Հարությունը, Ակոփին ձին է քացի սվել, Օսեփը հանդում մրսել եկել մեռել է, Եսայուն ջուրը տարավ, Ավետիքին՝ ծերությունը, ձերոնք մի հերոսական, մի կարմիր, մի շրիսկան մահ չեն ունեցել... ու սրանց բոլորի գլխին՝ իրենց Օհանես հերը՝ հարյուր չգիտեմ քանի տարեկան: Ծառերի պես կան, ոտի վրա փտում են: Աշխարհի ոչ չարն են հասկանում, ոչ բարին - ծառի, թփի, ինչ ասեմ, լծկանի, ի՞նչ ասեմ, խոտի պես կան, չարուբարու ցավը իրենցը չի, ում լուծն էլ լինի՝ լծկանն իրենք են, այո, ով հացվոր՝ իրենք հաց, ով լծող՝ իրենք լծկան, ով կացնավոր՝ իրենք ծառ:

Չոբանենք տղերքը կրակում ու շվթացնում են՝ խրտնած գազանի նման սա իրեն տալիս է դեպի ձերոնց ձորը: Դարպասից էլ իմ մերացվի ախպերներն են կրակում: Լանջից լանջ շվթացնում ու բղավում են - սա իրեն տալիս է դեպի ձեր ծմակը: Դսեղի տերտերն ասել է՝ «քեզ Քոշաքարա ծմակը գցիր, անտառ տեղ է՝ կամ կփրկվես, կամ գելը կուտի»:

«Անտառ տեղ է, Քոշաքարը քեզ թե փրկեց՝ փրկեց», իսկ թե ծմակն ու ծառը չփրկեցին՝ Ավետիքի ոչխարը կփրկի: Ոչ թե Ավետիքը շատ ոչխար ունի՝ կմտնես մեջը կփրկվես, այդ հենց Ավետիքենք են ոչխար - քեզ տուր Ավետիքի ոչխարին: Որբերը փեշերին փաթաթված իմ հորաքույր Մանիշակը դուրս կգա ախպոր դեմ. «ինչ որ եղել է՝ եղել է, Իշխան ջան, ես մոռացել եմ, դու էլ մոռանալու տուր»: Եվ վիզը ծռած քո պապ Ավետիքը դուրս կգա իմ հոր առջև և բերանում խոսելու-խնդրելու լեզու չի ունենա, քանի որ մեղվից ու ծառից ու ուրազից ու եզնից նա մարդկային ի՛նչ լեզու էր սովորած լինելու: Եվ դեք քո պապ Եսային: Եվ դեք քո պապ Հարությունը: Եվ դեք սրանց հեր Օհանեսը՝ կույր-կույր, կույր-կույր, ձեռնափետով դուրս կգա Իշխանի առջև, «էդ ի՞նչ է լինում, Ավետիք, լավ չեմ տեսնում»: Ու դե՞ տնկած թփի պես քո հերը - ոչխարի մի հոտ,- տղամարդ ես՝ սրանց մեջ թվանք բանեցրու:

Ինչո՞ւ, խի՞, ինչի՞... Էսքան ներե՛լ, ներե՛լ, մոռանա՛լ - ինչի՞ համար: Էսքան չարություն ու էսքան ներել, ներել, մոռանալ, ներել, ներել ու էսքան չարություն: Մեղավորն ո՞վ է - դո՛ւ, զավակս, իմ հույսս, իմ տառապանքս, իմ տանջանքս, մեղավորը դու ես:

«Հա քու՛...» - իմ հերն անտառը բռնում է՝ որ սա իրեն անտառին չտա ու անտառով-անտառով սրա հետ բարձրանում է: Մա էլ՝ դեմի բաց լանջով-լանջով, գետն ի վեր... Դարպասի այգիներից հետո չէ՞ ձորը նեղանում է: Չորի նեղանալու հետ իմ հերն ու սա որ մոտենում են՝ եղտեղ այգիների գլխով իմ հերը շվթացնում ու կրակում է Ձույզ աղբյուրի մոտից - սրան ետ է տալիս: Իմ հերն ուզում է սրան քշել, բերել կոխել Ճգնավորի էրը, բայց Փլքերի գլխից Չոբանենց խոզարածը տալիս սպանում է: Տալիս կծկում է Դարպասի ջաղացների մոտ: Իմ հերն, ասում են, գնդակահարելու միտք չի ունեցել: Ասում են իմ հերը նրան էնքան էր քշելու, մինչև տրաքեր: Անասունը որ թունավորվում է, օձը մարդու որ կծում է՝ էնքան են վազեցնում, որ հոգին դուրս է գալիս, բայց քրտինքի հետ թույնն էլ է դուրս գալիս, ու մարդն ազա՛տ, թեթև, կարծես երագում թռչելիս լինի...- բայց մեր քեռոնց խոզարածը Փլքերի գլխից տալիս կծում է ջաղացների մոտ: Չոբանենց կապուտաչյա տղերքը ծիծաղում ու իմ հորն ասում են. «դե մեղք էլ էր, ահը սրտում ինչքա՞ն էիր ապրեցնելու»:

Էս է:

Ու հետո՛ - որ իմ հերը կռանում, թումբ է դառնում... թումբ, քար, կոճղ, չափար է դառնում Արզումանենց Ռուբենի ոտի տակ ու ասում. «ոտդ տուր ու թո՛իր»: Իսկ Ռուբենը ծանր տղամարդ էր, չէ՛, կերած-խմած նրա մարմինը ձին գոռով էր տանում, նա ի՛նչ թռչող էր, բայց քո պապը կոացել, իրենից քար է շինել նրա համար՝ որպեսզի նա դնի մի ոտն էլ, երկու ոտն էլ ու թամբից բռնած դեռ չարչարվի, չարչարվի քո պապի վրա ու նստի ձիուն, քանի որ Իշխանի ծնկով ու ձեռքով չի կարողանում հեծնել: Էս դու ես ինձ պատմել: Դու է՛ս Իշխանին ես տեսել: Ռուբենի բեռն, այո, ծանր է... զավակս, զավակս... բայց դա իմ հերն է: Իմ հերն, այո, կկռանար, նրա ոտի տակ քար կդառնար ու կասեր. «ոտ՛ ւր, տո՛ ւր, տո՛ ւր... տուր, այտա, ոտդ տուր ու թո՛իր»: Կյանք է, զավակս: Կյանք է, ես իմ հորը չեմ պաշտպանում, ես նրանից ոչ մի օգուտ չեմ տեսել, բանտում իմ բոբիկության վրա լաց լինելուց հետո էլ նա կոշիկ չառավ, նա օգուտը ինձ՝ քո զրնգուն ու քինոտ արյունն էր լինելու - չեղա՛վ, էդ էլ չեղավ... բայց ես ասում եմ. իսկ լա՛վ է, որ քոնոնք՝ քո էստեղիները ոչ կռանում են, ոչ բարձրանում, ոչ էլ ապրում - քնա՛ծ, բարի՛, ալարկո՛տ կան, թե կտրեցիր՝ կտրեցիր, թե չկտրեցիր՝ ուրեմն դեռ ոտի վրա է, գլխարկը թե տարար՝ տարար, թե չտարար՝ ուրեմն դեռ գլխին է: